ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 17 >> հոկտեմբերի 2019թ. N 13-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 526-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 526-Լ հրամանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 5-րդ կետի 12-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ <<12.1>> ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<12.1 բյուջեների կազմման հիմքում դրվող գնման գործարքների գների որոշման մեթոդաբանության մշակման և հաստատման ներկայացման աշխատանքները.>>:

2) 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ վարչության պետի տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում գլխավոր մասնագետներից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ>>:

3) Հավելվածից հանել՝ <<V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ>> բառերը, 11-րդ, 12-րդ կետերը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ